Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 882 — ՇԱԲԱԹ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1886 (Ն. Տ.) 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1886 — 24 ՐԱՄԻԼ ԼԻՎԱԼԻ. 1304

20 ՓԱՐԱ. (ՅՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՌԱՒԱԼԿ ԱՄԱՍՈՒԱՅ ԹԵՐԹԻՆ ՊԻՏԻ Է ՈՒՂԱՐԿԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ

ԳԱՂԱՓԱՐԱՏԻՊԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ. (ՅՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. Պոլսոյ Հասցէ՝ Տարեկան դահեկան ոսկով 200
» » Վեցամսեայ » » 100
» » Քառամսեայ » » 50
Գաւառաց » Եւ տեղական
Թղթատարով տարեկան » » 240
Գաւառաց հասցէ՝ Եւ տեղական
Թղթատարով վեցամսեայ » » 120
Գաւառ Եւրոպիոյ, տարեկան Ֆրանկ » » 56
» » վեցամսեայ » 28
Դրամս զրկուած լրագրաց համար ծախք հնարաւորութեան վրայ է։
Խմբագրատեղիս դիմուած նամակ կամ դրութիւն հաս չառնուիր։

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Dégirmen-Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1886

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՎ Է Պ. ՖԼՈՒՐԱՆ

Պ. Էմիլ Ֆլուրան, Ֆրանսայի արտաքին գործոց նոր և անծանօթ նախարարն, որ «ի չգոյէ լաւագոյնի» կոչուած է յայս բարձր պաշտօն, է որդին անուանի բնախօս (ֆիզիօլոգ) Ֆլուրանի, որ 1867 ին մեռաւ։ Հանգուցեալն էր ընկեր Ֆիւվիէի, անդամ Ֆրանսական Ակադեմիոյ, բարձրագոյն Դիտութեանց Ակադեմիոյ, և հեղինակ Տարուինի դէմ քննադատական գործի մը։ — Էմիլ Ֆլուրանի եղբայրը) Կլեսդաւ, ծնաւ 1838 ին, և 1863 ին էր իւր հօր փոխանորդն ի Քոլէժ սր Ֆրանս։ Կիւսդաւ գործոն դեր մ՚ունեցաւ Կրեմէի ապատամբութեան մէջ։ Կրեսացիք զինք անգամ ընտրեցին Իրենց Ազգային ժողովոյ, և պատուիրակ ղրկեցին Ամէնէք։ 1869 ին Նաբոլէոն Գ. ի դէմ ընդդիմադիր հանդիսացաւ, և եռամեայ բանտարկութիւն կրեց Կայսրն անարգելուն համար։ Կիւսդաւ արձակուելուն պէս մենամարտեցաւ Պոնապարդեան Պ. Բօլ որ Բասանեաքի հետ, և ծանրապէս վիրաւորեցաւ։ 1870 յունուարին Վիբդոբ Նուսաթ յուղարկաւորութեան առթիւ ռամկավարական ցոյցը կազմակերպեց, և յայսոդ ամսուն, խումբ մը հետեւողներով, պատնէշներ կառոյց Պէլվիլի փողոցներուն մէջ, Ճանդլիա փախաւ, և ի բացակայութեան դատապարտեցաւ եռամեայ բանտարկութեան։ Բարիզի պաշարման պահուն մասնակցեցաւ Հայաբակորդեանց ամէն անյաջող փորձերուն, և ի բացակայութեան մահուան դատապարտեցաւ։ Բարիզի անձնատուութենէն մի քանի օր յառաջ։ Հասարակորդի իշխանութեան միջոցին նորէն երեւցաւ, մասնակցեցաւ Մոն Վալէրիէնի վրայ յարձակման, և ի Շադու, ապրիլ 3ին, գիշերուան մը մէջ հանդիսած միջոցին, ոստիկանաց ձեռքն ինկաւ, որք սպանեցին զինք։ Աշխարհագիր և ցեղագիր մ՚էր քաղաքականութիւնն ընդդիմելէն առաջ, և իւր հաշ իւր հակառակորդաց իսկ արդահատանքը շարժեց։

Իսկ Կիւսդաւի կրտսեր եղբայրն, Էմիլ Ֆլուրան, նոր նախարարն, 1863ին Պուսական խորհրդոյ անդամ անուանեցաւ, և ապա կրօնական դործոց տեսուչ եղաւ։ Այս պաշտօն ընդունելով, Պ. Էմիլ Ֆլուրան Պուսական խորհրդոյ դերնախագահ անուանեցաւ, իբրև քաջ իրաւագէտ, և վերջերս արտաքին գործոց նախարարութեան «Ֆրանսական թեւարկութեանց մասնախմբին» պետ էր։

* * *

ԳԱՂԱՓԱՐՔ Պ. ՖԼՈՒՐԱՆԻ

Թարգմն Բարիզեան Թղթակից Պ. որ Պրոֆիտ ևս յանկարծակիի եկեր է լսելով թէ Պ. Ֆլուրան անուն ունի արտաքին գործոց նախարար կարգուած է։ Շեմարն ըսելով թէ ալ չէր ճանչեր այս Ֆլուրան կոչուած մարդն։ Ուստի, բարեկամի մը միջնորդութեամբ, կ՚երթայ, կը ներկայանայ, անձամբ անձին տեսնելու համար թէ ո՞վ և ի՞նչպէս մարդ է։ Պ. Ֆլուրան հապճեպ յիսնամեայ, երիպտնասակ, բարակ, քաղցրաբարոյ, գրչեթէ երկչոտ և խոհուն մարդ մ՚է։

«Կը հաճիմ թէ ընդէր ուզեր էք տեսնել զիս, ըսեր է Պ. Ֆլուրան։ Դուք որ երկար ժամանակէ հետէ ուշի ուշով կը ընէք Ֆրանսայի գործերն, ասկէ առաջ ալ այս պաշտաման մէջ տեսած պիտի լինիք նոր մարդ, որ յանկարծ կը կոչուէր անօրինել ծանրակշիռ խնդիրներն որք մեծ երկրի մը արտաքին գործոց նախարարին կը ներկայանան։ Կը խոստովանիմ թէ ես ևս վարանեալ մնացի ի տես թղթակցութեանց որք այս պաշտօնարանէ վերջերս ուղղուած էն ամէն կողմ, վերաբերմամբ յոյժ խառնաշփոթ և կենսական խնդրոց։

«Երբեք միտքս չէի անցուցած արտաքին գործոց նախարար լինել։ Երբ տեսայ թէ կրօնական գործոց տեսչութիւնը թողուլ պիտի հարկադրիմ, ըսի առ Պ. Ժիւլ Ֆէրրի։ «Պուսական խորհրդոյ «հարդն անչարժ վիճակ մ՚է երիտասարդ պաշտօնէի մը համար, որ գործ «ծելու պէսքը կը զգայ դեռ։ Եթէ «դիւանագիտական պաշտօն մը տար «ինձ, մեծագոյն հաճութեամբ կընդունիմ, զի շատ կը սիրեմ այդ կերպ «զբաղում»։ Պ. Ժիւլ Ֆէրրի հրաժարեցաւ փափաքիս գոհացում չտուած։ Ղրկուեցայ ի Պուսական խորհուրդ, հոն հաստատուեցայ, և այլ ևս չէի խորհեր դիւանագիտական ասպարէզին վրայօք, երբ նոր նախարարապետն եկաւ արտաքին գործոց նախարարութիւն առաջարկել ինձ։ Ըսի թէ վարժուած չեմ արտաքին խնդրոց, և թէ արտաքին գործոց նախարարութիւնը կ՚ահաբեկէ զիս։ Հարկաւոր կ՚ելեր չեմ կրնար ունենալ։ առնենաբան չեմ։ Վերջապէս ամէն պատճառ ունիմ ես կենալու այս բարձր պաշտօնէ։ Պ. Կոպլէ պարզապէս բաւ ինձ թէ ուրիշ աւելի յարմար մէկը չկարենալ գտնելուն համար էր որ ինձ կառաջարկը զայս պաշտօն։ Պատմեց թէ քանի՞ քանի՞ բաղաքագէտներու դիմած էր և մերժուած։ Պատասխանեցի թէ Հանրապետութեան ծառայող մ՚եմ։ թէ բարի զինուոր մը տրամաբանելու չէ, և թէ քանի որ ինք, իմ պէս լինելով, իւր պաշտօնակցաց հետ խորհրդակցութեամբ կը հրամայէր ինձ վարել զայս պաշտօն, հնազանդիլ միայն կը մնար ինձ։ Բաց ասոր, նոր նախարարութեան համեստ հիմնագրոյն լեռվին համիստ էի։ Տեսայ որ Պ. Կոպլէ փայլուն խոստումներ չէր բրած խորհրդարանին, և ինք, իւր պաշտօնակցաց հետ, դործի կը ձեռնարկէր անկեղծապէս, և ոչ թէ ինչնասէր դիտմամբ մը, կրցածն ևեթ ընելու առաջադրութեամբ։

«Այս պաշտօնարանը դալով, անմիջապէս տեսայ կատարելի գործին անհնարութիւնն, և զգացի թէ Եւրոպիոյ այժմեան վիճակն երկար փորձ մը պահանջեր։ Ես ամէն մարդէ աւելի կը ըմբռնէր։ Ես ամէն մարդէ աւելի գիտէ իմ անբաւականութիւնս պաշտօնի մը համար, յորում ամէն ինչ կախեալ է բացատրութեանց ճիւերէ ու երանդներէ, և ուր ամենափոքր անուշադրութիւն ծանր հետեւանքներ կ՚ունենայ երբեմն։ Բայց իմ մասիս հարկաւոր խոհեմութեան ու զգուշութեան շաւղին խոտորելու չափ մեծամիտ չեմ, ուստի և հոգ պիտի տանիմ Եւրոպիոյ արդէն մեծ չփոթութեանց վրայ նորեր չաւելցնել։ Կառավարական պաշտօնեաներու մէջ գտնուելուս շնորհիւ, անտեղեակ չեմ այն արտաքին խնդրոց յորս շահ ունինք։ Աւո գալէս առաջ գիտէի թէ ծայրագոյն Աբդուլլոյ խնդիրը ծանր մտահոգութեան պատճառ են մեզ։ Գիտեմ նաեւ թէ եգիպտական խնդիրն, յորում բազմաթիւ թիւրեմացութիւնք մուտ գտած են, մեծ հանդարտութեամբ և լուրջ ուշադրութեամբ պէտք է նկատուի։ Երբ հարկ է կարդադրել բարոյ յարաբերութիւններ ի մէջ երկու մեծ և բարեկամ ազգաց, շատ հաստատութիւն պէտք է, և ազդուութեան հետ խառն պէտք է լինի բարեկամութիւն։ Մեր դիտաւորութեանց վրայ դամեն, որ պէտք է ապահովինք։ կը բերեմ մինչ մեր իրաւանց։

Պ. ՖԼՈՒՐԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ ՊԱՎԱՐԱՆԱՆ ԽՆԴՐՈՅՆ ՎՐԱՅ

«Պուլկարաց խնդիրն, ինչպէս ամէն ինչ որ կը վերաբերի Աբեւելեան, խառնաշփոթ է յոյժ, և քանի կը յառաջանայ աւելի կը շփոթի։ Բարեբախտապէս, մեզ համար ուղղակի կարեւորութիւն չունի։ Մեզ համար այդ խնդրոյ կարեւորութիւնն է իւր վերաբերութիւն այն եւրոպական Տերութեանց, որոց հետ բարեկամական յարաբերութիւններ կը սահմանէք։ Զեռնհաս անձինք կը լսուին թէ ուզղապէս շահակից Տերութիւնք համաձայնութեան մը պիտի գան, առանց տեղի տալու նոր շփոթութեանց ծագման։ Ըսուեցաւ ինձ թէ պուլկար պատուիրակաց ի Բարիզ ժամանումը փափուկ գործ մը պիտի բանայ ինձ։ Կրնեն ինձ։ «Ահա այս պատուիրակներ «կուգան Պերլինի Դաշնագրով իրենց «տերկրին համար երաշխաւորեալ անկա«խութեան վայելումն հայցելու, եւ «ի՞նչպէս դուք, Հանրապետութեան մը «նախարարը, կրնաք մերժել այնչափ «օրինաւոր բաղձանք մը։ Եւ սակայն «եթէ ունկն դնէք անոնց, ի՞նչպէս պի«տի կրնաք ձեր բարեկամութիւնն հաշ«տեցնել ձեր պաշտօնական պարտաւո«րութեանց հետ, որք հարկ կը դնեն «ձեր վրայ մշակել Ռուսիոյ բարեկա«մութիւնն։»

«Իսկ ես կը մտածեմ թէ այս դժուարութիւն իրական բան մը չէ։ Մեք Պուլկարիոյ նկատմամբ նոյն դիրքն ունինք զոր բռնած է Դերմանիա։ Մեք պարզ միջնորդներ ենք, բարեկամական զգացմամբք ոգեւորեալ։ Իմ մասիս, ես ճշդիւ պիտի ընդօրինակեմ պուլկար պատուիրակաց Պերլինի մէջ լինելիք ընդունելութիւնն, որում բան կարի համաձայն պիտի վարուիմ երբ պատուիրակներն այսր ժամանեն։ Ա. յսինքն, ինչպէս կոմս Հէրպէրդ Պիսմարք ուշադրութեամբ ունկնդրեցաւ Պուլկարաց ներկայացուցիչներուն, և իբրեւ պարզ անհատներ պիտի ընդունի պուլկար պատուիրակները, Պ. Ֆլուրան ևս նոյն ընթացքը պիտի բռնէ։»

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Պ. Ֆլուրան ասոր խոստացաւ Պետութեան և հասարակական եկեղեցւոյ անջատման խնդրոյն վրայ, որում զբաղած է իրեւ կրօնական գործոց տեսուչ, և պարզապէս զբաղիլ իւր արդի պաշտաման բերմամբ։ Ես Պ. Ֆլուրանի կարծիքն է թէ արդի նախարարութեան դարձելիք խնդիրը չէ այս կամ ինչ ինչ որոշ գործեր կատարելու համար կարգուած է այս նախարարութիւն, որոյ անդամներն ոչ մին կը յանձնեն նախարար մնալ դանոնք ի դլուխս հանելէ յետոյ։ Բուն իսկ անջատման գործն անկարելի կը համարի ինք։ «Դի՛ խնդիրն երեք լուծում միայն երեսոյ ունի։ — Բարգաց՝ ն (Հայեր) կարգութիւն մը տալ կղերին, որ հանգստանում իրենց յառաջ բերել — կամ փոխել եկեղեցիներն, որոնք նամանաւանդ կրօնական հարստանք պիտի պատճառեն, — և կամ, արդի Բանբոյան ընդունել յետոյ, նոր մը մեռք բերել — ոչ անխոնարհութիւն և անյաջողութիւն մը կը լինի։ Ոչ ոք ի Ֆրանսա հաղորդման կ՚փափաքի։ Այդ բան անհայտ է մեր սովորութեանց հետ, մինչեւ իսկ անոնց սովորութեանց հետ, որք ամենաչնչին հանգիստներուն են և միշտ հանդիսաւորապէս մեզ կը նամագրուին։

Պ. որ Պրոֆիէ բաժնուեր է Պ. Ֆլուրանէ՝ տեսնելով յանձին նորա «խոհուն մարդ մը, փափաքով լաւ դործեր ընելու, սիրաշահ իւր պաշտաման, որ չի մինուեր արտաքին փայլ, և իւր պաշտօնն իւր իրին համեմատ կատարելու դիտաւորութիւնը բուսական վարձատրութիւն կը համարի ինքեան։» Ըսել է թէ բոլորովին պարապ մէկը չէ Ֆրանսայի արտաքին գործոց նոր նախարարը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի ԿՈՒԻԿՍՈՒԻԼ. Տիրոջի Բ-ոյս ռուսերէն թերթն հետեւեալ կերպիւ կը պատմէ վերջերս ի Կաւկասիա տեղի ունեցած չփոթութիւնները.

«Տարւոյս ամրան սկիզբն խմաց որուեցաւ Զէչէնեներուն թէ Կառավարութիւնը մտադիր է մարդահամար կատարել իրենց մէջ։ Բացատրուեցաւ մարդահամարին նպատակն, և ծանուցուեցաւ թէ իրենք ևս ինչպիսի պարտականութեանց պիտի ենթարկին երբ բովանդակ Կաւկասոյ ժողովուրդը զինուորական ծառայութիւն կատարել կոչուին։ Կառավարութիւնը կը յուսար թէ անկարգութիւն չպիտի ծագէր։ բայց ի հաշիւ չէր առնուած Զէչէն ժողովրդեան ծայրայեղ դիւրահաւանութիւնն։ Ամիսն միջոցին անտեղի զրոյցը սկսան չշրջարերել — ասելով (գիւղերուն) մէջ։ Զինուորական ծառայութենէ խոյս տալու համար, խմբովին Թուրքիա դաղթելու խորհուրդ մը կազմուեցաւ, և անմիջապէս հոդը լուր տարածեցաւ, ինչպէս սովորութիւն է ամէն անդամ որ Մահմետականք ոտք հանեն, թէ Իմամ մը երեւեցած է։ Հետեւանքն այն եղաւ որ օդոստոսի սկիզբը դժուարութիւնք ծագեցան մարդահամարի ցուցակները կազմելու, և Կրոնքի դաստակին մէջ հինգ աւուր բացարձակ մերժողական պատասխան տուին մարդահամարի պաշտօնէից։ Քաղաքային իշխանութիւնն անբաւական դոլով բարեկարգութիւն վերահաստատելու, զինուորական ոյժ գործածել հարկ եղաւ։ Կաւկասոյ ընդհանուր հրամատարն որոշեց որ գործին վերջ տրուի մէկ հարուածով, և եթէ կարելի է՝ առանց արիւնհեղութեան։ Հարկ էր ի հանդէս բերել բաւական ստուար զօրութիւն մը, ցոյց տալու համար դեռահաս մոլեռանդներուն թէ դիմադրութիւն անկարելի էր։ Իշխան Ամիլախվարի կոչուեցաւ այս պաշտօն ի դլուխ 40 վաշտ հեւանակազօրաց, 15 հեծելաիմբոց և 16 թնդանօթաց։ Վլատիքաւքաս հասաւ օդոստ. 25ին։ բայց անմիջապէս Զէչէնեներուն հոդը չմտաւ, ուղղելով ժամանակ տալ անոնց որ հանձնան վերահաս վտանգը։ Ցեռակցութիւն մը որոշուեցաւ, և ամէն տեղերէ պատուիրակներ դալով, դառնապատ Զօր-փարքմիրի, ինչպէս նաեւ Իշխան Ամիլախվարի իսօսեցան, պտրտած դրոյցներուն անտեղութիւնը բացատրելով, և հրամայելով որ վերադառնան իրենց դիւղերը, և ամէն դիմադրութեան անկարելութիւնն հասկցնեն իրենց մարդոց։ Առ այս վեց օր պարմանաժամ տրուեցաւ։ Զօրքերը նոյն միջոցին յառաջացան չէչէնական դառնակին սահմանն, և ի լրանալ պայմանաժամուն, մարդահամարը վերսկսաւ։ Բիչ օրէն նոր դրոյցներ տարածեցան մասնաւոր չփոթութեան մը։ Տեղ մը 27 — — ոք միաձայնեցան մարդահամարին ընդդիմանալու համար։ Աւելի ադդեցիկ միջոցներ ձեռք առնուեցան յանձամբ։ Որովհետեւ Զէչէնք կառավարութեան ներողամտութիւնը տկարութեան նշան կը համարէին, ստուար գունդեր ղրկուեցան վտանգեալ վայրերն, և այս մեծ զօրութեան ի տես ժողովուրդն տարագրեց պահանջեալ ցուցակները։ Մեկ գիւղ միայն դիմադրեց այն ադտիճան, որ սատիկ կրակ ընել հարկ եղաւ։ Ուրիշ լեռնային գիւղ մ՚ևս կը դիմադրէր, իւր անառիկ դրից ապաւինած։ Նեղ անցք մը միայն կառաջնորդէր մինչեւ լերան գագաթը. զօրքերն հարկադրեցան լանցնել այս անցք, այնպէս որ թնդանօթներ անցուցնել կարելի եղաւ։ Հոկտեմբերի դէպ ի կէսն, Իշխան Ամիլախվարի կարող եղաւ ըսել թէ Զէչէնաց ապստամբութիւնը նուաճած է դրեթէ առանց արիւնհեղութեան։ Այս իրողութիւնն առաւելապէս ուշադրաւ է այնու զի Զէչէնք լաւ զինեալ էին, և կը դանուէին կրօնական դրդռութեան վիճակի մը մէջ, որ զիրենք տարանջիր կ՚ընէր բռնութիւն գործելու։ Զէչէնաց երկրին մէջէն ծագած կայծ մը կրնար ծանր կրակ մը պատճառել Կաւկասոյ արեւելեան գաւառաց մէջ։»

Ի ԴԵՐՄԱՆԻԱ. Երեւան Ժողովոյ նիստերը դադրեցան առանց քաղաքագիտական զինուորական օրէնքին Ճանճանմանին մէկ վերջին նեղին մէջ, կեր ըռնական կամ կրերական Երեսփոխան մը առաջարկեց որ, իբրեւ միայն ն բանակ Կառավարութեան արուի, փոխանակ 534ի, 518 վաշտ միայն, երեք տարուց համար, փոխանակ եօթնի։ Ցաւեց թէ իւր կազմութիւն տրամադիր է նաեւ ընդունիլ որ բացառաբար 534 վաշտ արուի միայն առաջին տարւոյն համար։ Պատերազմական նախարարը մերժեց այս եւ նմանօրինակ ուրիշ առաջարկ մը։ Ցանձնախումբն եւս մերժելէ յետոյ այդ առաջարկներ, մերժեց նաեւ կառավարական ծրագրին յօդուածն, որուն համեմատ յաւելեալ բանակն 1887 ապրիլ 14ն պիտի սկսի կազմուիլ։ Ի վերջոյ, 12ի դէմ 16 ձայնիւ, Ցանձնախումբը Կառավարութեան խնդրած 468,499 զինուորաց տեղ 430,000 զինուոր սահմանեց, երեք տարուց համար միայն, փոխանակ եօթնի։

«Ուշիմ քաղաքագէտս մ՚ըսեր է առ Պ. որ Պրոֆիէ։ «Զգիտեմ թէ Զօր. Պուլանժէ ինչ նպատակի պիտի ծառայէ յայսմ հետէ։ Բայց տասնչորս ամիսներեւ բանն այն է թէ Ֆրանսայի պատերազմական նախարարը ծառայած է Մարչչալ Մոլթքէի խորհրդոց յաջորդաց, միջոց տալով նմա 41,000 զօրք ևս տեղադրելու Գերմանիոյ Միացեալ բանակին վրայ։»

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Պ. Կոպլէ դասերէ նախարարապետն է զոր ի պաշտօն կոչեց Պ. Ժիւլ Կրէվի իւր Նախագահութեան ութամեայ շրջանին մէջ։ Աւասիկ 1879էն ի վեր իրարու յաջորդող Նախարարապետաց ցուցակն։ Պ. Վասինիէն (1879,) Պ. Ժիւլ Ֆէրրի (1880), Պ. Կամպէդդա (1881), Պ. որ Ֆրէսինէ (1882,) Պ. Տիւբլէռ (1882,) Պ. Ֆայլիէռ (1883,) Պ. Ժ. Ֆէրրի (1883), Պ. Պրիսոն (1885), Պ. որ Ֆրէսինէ (1885), և այժմ Պ. Կոպլէ (1886)։

— ՌՈՒՍԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ Ի ԿԵՂԲ. ԱՍԻԱ. Կեդբ. Ասիոյ այն մասին մէջ, ուր Անդլիոյ թեւարկութեան ենթարկեալ ափդանան երկիրը սահմանակից է չինական և ռուսական տացուածոց, կը տիրէ սահմանաց չփոթութիւն մը և իրաց անկարգ վիճակ մը, որ կը վախցուի թէ աշխարհի այն կողմը նոր խնդրոյ մը ծագման պատճառ պիտի լինի։ Բունճուա փորը Խանութիւն մ՚է ընդ մէջ անդլ Բաշմիրի, չինական Բեաշդարի և ռուսական սահմանագիծոյ։ Ռուս լրագիրը սա լուրը կը հրատարակէն «Հասան Խան, Վերհապետ Բունճուսի, սպանեցաւ ձեռամբ իւր մեծ որդւոյն, որ գլուխ եղած էր ապստամբութեան մը։ Շարժման պատճառն էր Խանին կողմէ եղած թոյլտուութիւնն երկու Անդլիացւոց Բամիր երթալու համար Բունճուսի մէջէն անցնելուն։ Ընդհանուր ապստամբութիւն մը պիտի ծագի եթէ Անդլիացիք փորձին նուաճել զայս շարժում, Բաշմիրի կողմէ միջամտելով։ Բեաչդարի Չինացիք, թէեւ հինա շատ զօրք չունին, յայտ բեաչդարցւոց իրենց վարկը չկորուսանելու համար չեն կրնար անտարբեր կենալ Բունճուսի մասին։» Ռուս լրագիրը կը գանդատի թէ Անդլիա կեդբ. Ասիոյ ռուսական տացուածոց կը սպառնայ։ Հինտու-Բուշի հիւսիսակողմէն Խանութիւնց և ամրութեանց ամբողջ գծով մը։ Թերեւս անդլ-ռուս այս նորածագ խնդրոյ հետեւանք է Ռուսաց Յանգանստան մտնելուն անհիմն զրոյցը։

—)(115)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻԼ ՎԷՐՆ

ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ՓԱՐՍԱԽ

ԾՈՎԵՐՈՒՆ ՏԱԿ

ՊՕԱԿԵԱԼ Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԷՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԿԻՒԼՅԻ-ՍՊԷՆՍ

—Ո՞րն է, պարո՛ն, պատասխանեց ինձ հեգնաբար։ Նոր գլո՞ւխ մ՚ըլլք, զոր ես չեմ կրցած նշմարել։ Արդեօք ծովը նոր գաղանի՞ք մը մատնեց ձեզ։»

Մեր հաշիւները շատ հեռի էին իրարմէ։ Բայց ես պատասխան չտուած, նաւապետը՝ սեղանին վրայ բաց ձեռագիր մ՚ինձ ցուցնելով՝ նոսա ըսաւ ձայնիւ.

«Աւասիկ, պարո՛ն Արոնաքս, քանի մը եզուով ձեռագիր մը։ Ծովերուն մէջ ըրած գնուռեանցս բավական տեղեկութիւն է, եւ եթէ Աստուած կամի, չպիտի կրնայ ինձ հետ։ Այս ձեռագիր, իմ անուանս տարբերակ, եւ կենացս պատմութեամբն ամբողջացեալ, անընկալելի փոքրիկ պարուսածի մը մէջ պիտի փակուի, եւ Նէմիլոսի մէջ պիտի ինկնի։ Ես ամէն ինչ գրեցի։ Ինչ որ ես գիտեմ, ինչ որ ես տեսեր եմ, ինչ որ ես զգացեր եմ, ինչ որ ես ենթադրեր եմ, ամենայն ինչ։ Ինչ եւ լինին հետեւանքներ, ինչ եւ լինի օրը։»

Բայց օդն ևս բան մը ունի ապառնալից կերպարան մը կ՚առնուր։ Փոթորիկն նշաններ կը տեսնուէին։ Մթնոլորտը լռութեան գոյն մը կ՚առնուր, տերեւներ հեւաշնչակ կը դիզուէին, որոնք անկեր ալ կը փաթաթեին արտադուէս։ Ծովը կ՚ուռնար եւ երկայն կշտակներ կը կազմէր։ Թռչունք կ՚անհանգստանային, ի բաց առեալ մրրկասէր ապառներիկները։ Ծանրաշարժն զգալուպէս կիսկեր եւ օդին մէջ գոլորշեաց սառակի ձիւներ կը ցուցնէր։ Տարերաց գոյները տարածեցան մասաբուտ չփոթութեան մը։ Տեղ մը 27 — — ոք միաձայնեցան մարդահամարին ընդդիմանալու համար։ Աւելի ադդեցիկ միջոցներ ձեռք առնուեցան յանձամբ։ Որովհետեւ Զէչէնք կառավարութեան ներողամտութիւնը տկարութեան նշան կը համարէին, ստուար գունդեր ղրկուեցան վտանգեալ վայրերն, և այս մեծ զօրութեան ի տես ժողովուրդն տարագրեց պահանջեալ ցուցակները։ Մեկ գիւղ միայն դիմադրեց այն ադտիճան, որ սատիկ կրակ ընել հարկ եղաւ։ Ուրիշ լեռնային գիւղ մ՚ևս կը դիմադրէր, իւր անառիկ դրից ապաւինած։ Նեղ անցք մը միայն կառաջնորդէր մինչեւ լերան գագաթը. զօրքերն հարկադրեցան լանցնել այս անցք, այնպէս որ թնդանօթներ անցուցնել կարելի եղաւ։ Հոկտեմբերի դէպ ի կէսն, Իշխան Ամիլախվարի կարող եղաւ ըսել թէ Զէչէնաց ապստամբութիւնը նուաճած է դրեթէ առանց արիւնհեղութեան։ Այս իրողութիւնն առաւելապէս ուշադրաւ է այնու զի Զէչէնք լաւ զինեալ էին, և կը դանուէին կրօնական դրդռութեան վիճակի մը մէջ, որ զիրենք տարանջիր կ՚ընէր բռնութիւն գործելու։ Զէչէնաց երկրին մէջէն ծագած կայծ մը կրնար ծանր կրակ մը պատճառել Կաւկասոյ արեւելեան գաւառաց մէջ։»

Ի ԴԵՐՄԱՆԻԱ. Երեւան Ժողովոյ նիստերը դադրեցան առանց քաղաքագիտական զինուորական օրէնքին Ճանճանմանին մէկ վերջին նեղին մէջ, կեր ըռնական կամ կրերական Երեսփոխան մը առաջարկեց որ, իբրեւ միայն ն բանակ Կառավարութեան արուի, փոխանակ 534ի, 518 վաշտ միայն, երեք տարուց համար, փոխանակ եօթնի։ Ցաւեց թէ իւր կազմութիւն տրամադիր է նաեւ ընդունիլ որ բացառաբար 534 վաշտ արուի միայն առաջին տարւոյն համար։ Պատերազմական նախարարը մերժեց այս եւ նմանօրինակ ուրիշ առաջարկ մը։ Ցանձնախումբն եւս մերժելէ յետոյ այդ առաջարկներ, մերժեց նաեւ կառավարական ծրագրին յօդուածն, որուն համեմատ յաւելեալ բանակն 1887 ապրիլ 14ն պիտի սկսի կազմուիլ։ Ի վերջոյ, 12ի դէմ 16 ձայնիւ, Ցանձնախումբը Կառավարութեան խնդրած 468,499 զինուորաց տեղ 430,000 զինուոր սահմանեց, երեք տարուց համար միայն, փոխանակ եօթնի։

«Ուշիմ քաղաքագէտս մ՚ըսեր է առ Պ. որ Պրոֆիէ։ «Զգիտեմ թէ Զօր. Պուլանժէ ինչ նպատակի պիտի ծառայէ յայսմ հետէ։ Բայց տասնչորս ամիսներեւ բանն այն է թէ Ֆրանսայի պատերազմական նախարարը ծառայած է Մարչչալ Մոլթքէի խորհրդոց յաջորդաց, միջոց տալով նմա 41,000 զօրք ևս տեղադրելու Գերմանիոյ Միացեալ բանակին վրայ։»

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Պ. Կոպլէ դասերէ նախարարապետն է զոր ի պաշտօն կոչեց Պ. Ժիւլ Կրէվի իւր Նախագահութեան ութամեայ շրջանին մէջ։ Աւասիկ 1879էն ի վեր իրարու յաջորդող Նախարարապետաց ցուցակն։ Պ. Վասինիէն (1879,) Պ. Ժիւլ Ֆէրրի (1880), Պ. Կամպէդդա (1881), Պ. որ Ֆրէսինէ (1882,) Պ. Տիւբլէռ (1882,) Պ. Ֆայլիէռ (1883,) Պ. Ժ. Ֆէրրի (1883), Պ. Պրիսոն (1885), Պ. որ Ֆրէսինէ (1885), և այժմ Պ. Կոպլէ (1886)։

— ՌՈՒՍԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ Ի ԿԵՂԲ. ԱՍԻԱ. Կեդբ. Ասիոյ այն մասին մէջ, ուր Անդլիոյ թեւարկութեան ենթարկեալ ափդանան երկիրը սահմանակից է չինական և ռուսական տացուածոց, կը տիրէ սահմանաց չփոթութիւն մը և իրաց անկարգ վիճակ մը, որ կը վախցուի թէ աշխարհի այն կողմը նոր խնդրոյ մը ծագման պատճառ պիտի լինի։ Բունճուա փորը Խանութիւն մ՚է ընդ մէջ անդլ Բաշմիրի, չինական Բեաշդարի և ռուսական սահմանագիծոյ։ Ռուս լրագիրը սա լուրը կը հրատարակէն «Հասան Խան, Վերհապետ Բունճուսի, սպանեցաւ ձեռամբ իւր մեծ որդւոյն, որ գլուխ եղած էր ապստամբութեան մը։ Շարժման պատճառն էր Խանին կողմէ եղած թոյլտուութիւնն երկու Անդլիացւոց Բամիր երթալու համար Բունճուսի մէջէն անցնելուն։ Ընդհանուր ապստամբութիւն մը պիտի ծագի եթէ Անդլիացիք փորձին նուաճել զայս շարժում, Բաշմիրի կողմէ միջամտելով։ Բեաչդարի Չինացիք, թէեւ հինա շատ զօրք չունին, յայտ բեաչդարցւոց իրենց վարկը չկորուսանելու համար չեն կրնար անտարբեր կենալ Բունճուսի մասին։» Ռուս լրագիրը կը գանդատի թէ Անդլիա կեդբ. Ասիոյ ռուսական տացուածոց կը սպառնայ։ Հինտու-Բուշի հիւսիսակողմէն Խանութիւնց և ամրութեանց ամբողջ գծով մը։ Թերեւս անդլ-ռուս այս նորածագ խնդրոյ հետեւանք է Ռուսաց Յանգանստան մտնելուն անհիմն զրոյցը։

Ամբոխեալ ծովի կամարներ ամպոց մեծամեծ ծուէններով, որք յարձակեալ ալեաց հետ կը խառնուէին։ Ոչ ևս կը տեսնէի այն մանր կոհակներն որք կը կազմուին բլրաձեւ ալեաց բացած լայն սորերուն մէջ։ Այլ միայն բարձրաբերձ ծածանումներ, որոց դագաթները չէին փչուեր, այնչափ հոմ էին։ Իրենց բարձրութիւնը կը մեծնար, եւ կարծես կը գրգռէին պիրաբ։ Նեպիլ-ս, մերթ մէկ կողմն վրայ ծաած մերթ կրկին մը պէս անկուած, զարհուրելի կերպիւ կը թաւալէր ու կը ատատուէր։

Ժամ հնգին մթնոյնեն հեղեղանման անձրեւ մը տեղաց, բայց հովն ու ծովը չընկան։ Մրրիկը մոնեին կը ՝ենէր՝ բաստան-հինգ մեթր արագութիւնամբ մէկ երկվայրկենի մէջ։ Այս պայմաններուն մէջ ի՞նչ ուժ մարդու կարան տանելու կրկնոցները դուռներու մէջ կը վարսէ, քամոյ հարուածներ կը տեղափոխէ։ Եւ սակայն Նեպիլ-ս կ՚արդարացնէր գլխնական ճարտարապետի մ՚այն խօսքը թէ «լաւ չինուած նաւապետ մը չկայ որ չկրնայ ապաստիլ կարգալ ծովու։» Այսպէս ընդդիմացող ժայռ մը չէր որ այդ կոհակներ քայքայէին, այլ զանգուածեալ իւղ մը, հոսուն, եւ չարժուն, առանց կայմերու, որ անպատուհաս կը խիսիմէր՝ նոցա կատաղութեան դէմ։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐՍԼԱՆՊԷԿԻ ՀՐԿԻԶԵԱԼՔ

Գոհութեամբ կ'իմանանք թէ Իզմիրի առաջնորդ Տ. Մելքիսեդեկ Սրբազան իւր նախագահութեամբ յանձնաժողով մը կազմեր է, ի նպաստ Արսլանպէկի հրկիզելոց Հանդանակութիւն մը բանալու համար։

Լիապէս ենք թէ Իզմիրի Պատ. ազգայինք առատաձեռն օժանդակութեամբ մեծ բաժին մը պիտի ունենան դժբաղդ արկածելոց հասցուած օգնութեան մէջ։

ՀԱՇՈՒԵԿԵՑԻՆ ԵՌԱՄՍԵԱՑ

Զորից միացեալ Թաղից Գում-գափուի, Գում-գափուի դուրսի, Կէտիկ բաշայի եւ Եէնի-գափուի Ազգատասէր ընկերութեան Տնօրէն Ժողովոյ Օգոստ. 19էն մինչ 1 Նոյ. 1886

Մուտք

1886 օգոստ. 19էն մինչեւ 31 հոկտ. զանազան բաժանորդներէն գանձուած	3215
Բացէն նուէրներ	25 20
Գումար	3240 20

Ծան. Թէեւ օգոստ 19էն սկսած է Տնօրէն Ժողովս գործողութեան, բայց շատ բաժանորդներէ մասին մէկէն սկսած է բաժինները հաւաքել։

Ելք

Ընկ. Երեփ. Ժողովոյ կազմակերպութեան համար նախնական ծախք	զանազան 200
Տնօրէն Ժողովոյ բաժանորդաց տոմսակներուն գնիք, տետրակ եւ թուղթ. ևն.	265 35
Հաւաքչի և քսան (20) հիւանդաց համար դեղ եւ սնունդ	665
Բաժանորդներէ գանձելի	315
Պատրաստ դրամ	1294 25
	3240 20

Ծան. Վերոյիշեալ 20 հիւանդք հետեւեալ կերպիւ կը բաժնուին։

3 Լանկա եւ Եէնի-գափու
9 Գում-գափու եւ շրջակայք
6 Կէտիք-բաշա եւ Գում-գափուի դուրս

20 որոցմէ 1ն՝ ապաքինած եւ 3ը դարմանելի են։

Կ. ՊՈԼԻՍ, 8 դեկտեմբեր

Սիկարի թղթի գործարանատէր Մեծ. Յովսէփ էֆէնտի Էլպէկ օգնած իւր վճարած թղթի հասոյթէն Վանի Սանդիխտեան Ընկ. Զարմարանին ի նպաստ ազգասիրաբար տասն եւ ութ օսմ. ոսկի նուիրած եւ սոյն նուէր իւրաքանչիւր տարի շարունակել խոստացած լինելով՝ ժողովս պարտք կը համարի այս առթիւ իւր խորին շնորհակալիք յայտնել հրապարակաւ։

Սանդիխտ. Ընկ. Տնօրէն Ժողովոյ

Ա. Գրիգորեան — Ա. Գրիգորեան

Ռ. Խ. ՎԱՐԴԱՆԵԱՆ — Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆՑ

ՏԱՐԵՐՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԵՒ ՀԵԳԱՐԱՆ

(Սիրուն, ճոխ, զուարթալի եւ հրահանգիչ բարմաթիւ պատկերքեր)

Բարսեղ Ե. Էքսէրճեանի սոյն գործոյն մէջ, յօրինեալ բոլորովին նոր եւ գիւրաւացի ոճով, աշակերտը պիտի սորվի այբուբէնէն սկսեալ կարդալ, մտածել, խօսիլ, պիտի հրահանգի բարոյական դասերով եւ հաւատալոց ճշմարտութեամբ; եւ պիտի վարժի մտամարզական դասուց, մանկավարժութեան ընծայած ամենագիւտ միջոցներով։ Գրքին գլխաւոր արժանիքն է տպագն կրնայ հանգերձ դէօցնելով։ Գրքոյս հնչումներն ալ տարբեր գրութեամբ պիտի ուսանի, նոյնպէս հեգելն, առանց դժուարութեան։ Հեղինակին մեծագոյն յաջողութեան համար բաւ է միայն ըսել թէ Բ. հատորը մէկ տարուան մէջ ոսկառած է իւր 2000 օրինակ։

Կը ծախուի ամեն հայ գրավաճառաց քով։ Կեդրոնատեղն է Յ. Դավաթեան գրատուն։

ԳԻՆ 3 ԶՐՈՒՇ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵԼՄՏԱԿԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱՐԱՐՆ

Այս աւուր Սոֆիէի մէջ կը կարդանք.

«Կայս. կառավարութիւնն երկրին ելմտական գործոց բարւոքման պէտքն զգալով և նկատելով որ կայս. անձնական Դանձուն նախարար Վսեմ. Յակոբ փաշա այս մասին կատարեալ ձեռնհասութիւն ունի, Ն. Վսեմութեան յանձնած է ելմտական նախարարի պաշտօնն, իբր սկզբնաւորութիւն մտադրեալ բարւոքմանց օրինաւոր գործադրութեան։ Յակոբ փաշա, որ յիրաւի տեղեակ է ելմտագիտական ամեն գործողութեանց և ինք ևս կը խոստովանի բարենորոգմանց գործադրութեան պէտքը, պաշտօնի կոչուած օրէն իւր նոր պաշտօնատեղին սկսած է յանձնել։ Ն. Վսեմութիւն իւր ներկայութեան կոչեր է բոլոր պաշտօնեաներն և գործածուած բոլոր տումարները քննելով ինչ ինչ դիտողութիւններ ըրեր է ոմանց պատրաստութեան և այլոց գրուելու ձեւին վրայ։ Յակոբ փաշա նոյնպէս վճռակագրական տումար մը պահանջած է ուր գրուած լինին իւրաքանչիւր պաշտօնէի անունը, ծառայութեան ժամանակամիջոցն և ամսաթոշակի քանակութիւնը։ Նոյնպէս նկատելով որ գաւառաց մէջ կատարուած դանձումները կեդրոնին ուղարկուելուն առթիւ դժուարութիւնը կը ծագին, հրամայեր է որ այս առթիւ ևս բարեփոխութիւնք լինին։

«Թէեւ չենք դիտեր թէ գործողութեանց այս յառաջարանն ինչպէս պիտի վերջանայ, սակայն անտարակոյս ենք թէ ասանք բարենորոգմանց սկզբնաւորութիւն մ'են և թէ Վսեմ. Յակոբ փաշայի ճարտար ջանից շնորհիւ իւր մտոյ պիտի տեսնուին բարենորոգմանց արդիւնքներ։»

* * *

Ֆրանս. Պոստը ևս իւր կարգին յօդուած մը կը նուիրէ Վսեմ. Յակոբ փաշայի ելմտական նախարար անուանման առթիւ ինչ ինչ խորհրդածութիւններ ընելու։

«Տեղական մամուլն և հանրային կարծիքը, կրսէ մեր Ղալաթիոյ պաշտօնակիցն, ընդհանուր ուրախութեամբ ողջունեցին այս անուանումն որ նախարարական սովորական փոփոխութենէ մը տարբեր, բոլորովին նոր նշանակութիւն մ'ունի։ Վսեմ. Յակոբ փաշա, որ համեմատաբար կարճ միջոցի մէջ վերակազմեց կայս. անձնական Դանձուն նախարարութեան կարեւոր պաշտօնատունն, Եւրոպիոյ համանման վարչութեանց հաւասար վիճակի մը մէջ դնելով զայն, յինքն կանձնաւորէ օսմանեան պետական մարդու ուղղամտութիւնը, խելացութիւնն ու գործունէութիւնը։ Կարգապահութեան և կանոնաւորութեան լաւ յատկութիւններով օժտեալ՝ Յակոբ փաշա պիտի կարենայ իւր երկրաթեայ կամքով եւ բնածին աշխատասիրութեամբ յաղթել այն բազմազիմի դժուարութեանց որոց պիտի բաղխի իւր բարենորոգման ծրագրոյն գործադրութիւնը։ Պէտք է խոստովանիլ թէ դժուարին է գործն, և Ն. Վսեմութեան տեղուրիշ ոք կրնար ընկճել, ամենայն բարեյօժարութեամբ հանդերձ։ սակայն Յակոբ փաշայի անցեալն ապահով երաշխաւորութիւն մ'է ապագային համար։ Եւ եւմտից նորընտիր նախարարն՝ բազմերեալ իւր վեհապետին վստահութենէն, պիտի դնանայ արդարացուցեալ ամենուն ակնկալութիւններն, արմատական ընելով դեղծումներ զրոս մամուլը ցաւօք կը հրատարակէր միշտ, և որք մնայուն հանդամանք մ'ստանալով, կը խանդարեին Եւրոպայէն վարչութեան կանոնաւորութիւնը։»

Ֆրանս. Պոստը ի վերջոյ յառաջ բերելով Թաբիթի նախընթաց աւուր թերթով հրատարակեալ խորհրդածութիւնները Տէրութեան եւմտից բարւոքման պէտքին և առ այս Վսեմ. Յակոբ փաշայի ակնկալուած արդեանց վրայ, կը ձգնակցի իւր թուրք պաշտօնակցին և կ'հրաւակացնէ թէ «Եւմտական նորընտիր նախարարը լաւ կազմակերպութիւն մը տալով Տէրութեան եւմտից, համայն օսմանցւոց երախտագիտութեան պիտի արժանանայ, վասն զի նպաստած պիտի լինի ազգային բարգաւաճման գործոյն եւ իւր վարչական ասպարէզը պիտի պակէ դեղեցիկ գործով մը։»

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նախընթաց երիկուն ռուսական դեսպան Պ. Նէլիդով չքեղ հացկերոյթ մը տուաւ որում ներկայ էին Մեծ-Եպարքոս Բեռակիզ փաշա, Արտաքին գործոց նախարար Սայիտ փաշա, Եուսուֆ Բիզա փաշա, Միրզա Մոհսին խան, դերմանական դեսպանն ու Տիկին Բաուվիձ, աւստրական դեսպանն և Տիկին Քալիչէ, անգլիական դեսպան և Լէտի Հուլադ, իտալական դեսպանն և Տիկին Կարվանիա, սպանիական դեսպան Պ. Բրէսբօ, հելլենական դեսպանն և Տիկին Քուռնուտրիոդի, ամերիկեան գործակատար Պ. Բինդէչդին Քինկ, հոլանդական, պելճիական, շուէտական, բուլմանական և սերբական դեսպանք ու դեսպանուհիք և Դարաստաղի գործակատար Պ. Գաբիչ։

Սեղանէն յետոյ, Տիկին Նէլիդով երեկոյթ մը տուաւ։

Դեսպանատան խորհրդական Պ. Օնաերկուշաբթի օրը յանձինքարտ Բեկերոպուրգի ուղեւորեցաւ, Տիկին Օնաի մօրաքեռ Ժօմինի Պատուոյ սրճարանն պատճառաւ որ հարբուած էր հեռադրաւ։ Հաւանաբար Տիկին Օնաեան մեկնիի ի մօտոյ։

Պ. ԶԱՐԻՖԻՆ ԲՈՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Պ. Լէսնիտաս Զարիֆին ի դիմաց բոլոր հելլէն դաղթականութեանց պատգամաւորաց հետեւեալ բանախօսութիւնն արտասանած է առաջի Եուսուսանի դահաժառանդ իշխանին.

«Հելլէնաց փափաղն այսօր կ'իրագործուի։ Վեհ. Թագաւորը ժողովրդեան կը ներկայացնէ իւր որդին դահաժառանգ Կոստանդին իշխանն, որ Աթէնքի պալատն մէջ ծնած և հելլէնաձեւոյ մը վարիչ կերպիւ կըրթուած լինելով, այսօր այն տարիքն հասած է որով այլեւս կրնայ կատարել երկինքի երեն պարգեւած պարտականութիւնը։ Երբ Ձեր Բարձրութեան ծնունդն հռչակուեցաւ, բոլոր Հելլէնք յանչափս ուրախացան Կաղօթէին որ Ամենակալ զՁեզ պահպանէ այն վտանգներէ որոց մարդս ենթարկուած է իւր կենաց առաջին տարիներուն մէջ։ Հելլէն ժողովուրդը սրտաբուխ կը դիտէր տարիներու հոլովումն և անհամբերութեամբ կսպասէր ժամանման այն թուականի զոր Սահմանադրութիւնը դրած է չափահասութեան համար։

«Վերջապէս Ամենակալորդն հասուցանկալուած ժամն։ Զափահաս եղար, զենուորական երդումբ կատարեցիք և Ձեր առաջին քայլն առիք յառաջդիմութեան ասպարէզին մէջ։ Ամեն կողմերէ Ձեզ ուղղեալ բարեմաղթութիւնք կը ծանուցանեն թէ բոլոր Հելլէնաց սրտերը կը տրոփեն։ Իբրեւ ներկայացուցիչ օտարաբնակ Հելլէնաց, նոցա խնդութեան և համակրական զգացմանց թարգման հանդիսանալու պատուն ունիմ և որոյ համար ղրկուած եմ յատկապէս։ Մինչեռնաւոր Հելլէնք իրենց ջերմ աղօթքները կ'ուղղեն առ Աստուած որպէս զի երկար կեանք պարգեւէ Ձեզ և Դուք ալ Ձեր օրովն և հետեւելով Ձեր Վեհ. Հօր ընթացքին իրագործէք այն ամենայն՝ որք մաղթանաց տեղ մը միայն գրուած են մեր սրտերուն մէջ։ Հելլենաց այս համակրութիւն՝ որ Ձեր ծնած վայրկենէն ընկած է պիտի շարունակուի միշտ յապագային Ձեր կենաց պայքարներուն մէջ։»

Թաբիթ իւր երեկի թուոյն մէջ քննադատելով այս բանախօսութիւնը, կ'ըսէ.

«Յայտնի է թէ այս տեսակ հանդիսի մը մէջ եղած բանախօսութիւնը մէ միայն բարեմաղթութիւններ կրնան պարունակել։ Հետեւաբար կը դարմանանք Պ. Լէսնիտասի պատշաճից հակառակ այն խօսքերու վրայ որով Յունաստանի շէնքերուն նպաստին, այսինքն Հելլէնաց ընդհանուր փափագը կը շօշափէ։ Արդեօք Պ. Լէսնիտաս այդ՝ ի իւր վարկը կորուսած է Հելլէնացւոց քով, որ մինչեւ իսկ կը զլխնի շէնքերը գոհացնելու համար եւս բառեր գործածել և պէտք կը տեսնէ ապացուցանել իւր հաւատարմութիւնն հելլենաց հիմնական նպատակին։ Իրաւ է թէ ամեն մարդ պարտի իւր հաւատեռն սիրել, սակայն այսպէս մէկ երկրի մը մէջ ալ տեսակ և մէս երկրի մէջ իւր հայրենակիցները համոզելու համար մինչեւ շէնքեր մը երեւնալով, մարդս կը կորսնցնէ այն հաւատամքը զոր երկու կողմէ ալ կը տածեն իրենց նկատմամբ։ Այս բանախօսութիւն մեզ շատ տգեղ երեւցած է և յայտնի է թէ Յունաց վրայ ևս մի և նոյն ազդեցութիւնը պիտի ընէ։ Արդեն մայրաքաղաքիս յոյն թերթերն ևս, կ'երեւի թէ ինչ ինչ նկատմամներով, չեն արտատպած այդ բանախօսութիւնը։ Վերջապէս ամեն ինդրոյ մէջ չափազանցութիւն և անհեռատեսութիւն միշտ զղջում յառաջ կը բերեն։»

ԿԱՏՊԱՆ ԷՖԷՆԴԻ

Սոֆիայէն կը հեռագրեն թէ Կատպան էֆէնտիի և Արտաքին գործոց նախարար Պ. Նաչէվիչի միջեւ ծագած անհամաձայնութեան վրայ, պուլկար կառավարութիւնն որոշեր է որ այսուհետեւ ամեն յարաբերութիւն դրաւոր կերպիւ կատարէ օսմ. կայս. պատուիրակին հետ։ Դարձեալ լսուր կայ թէ, կառսան էֆէնտի որ ժամանակ մ'ի վեր Բաւլարս զօրավարին հաստատման ընթացքի մը կը հետեւի, եւս պիտի կոչուի Գ. Դրան կողմէ։

Օսմ. պատուիրակն առ այժմ խրդրած է պուլկար կառավարութենէն որ խոհանոցն Սոֆիայի մէջ հրատարակեալ չորս լրագրեր որք Պաղեմակերկի Ազգեքանդր իշխանի վերընտրութիւնը կը քարոզեն։ (Լ. Հերալտ)

ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՕԱՆԶԱՆԱԺՈՂՈՎ.

Ի նպաստ Արսլանպէկի հրկիզելոց և Պրուսայի երկրաշարժէ վնասելոց կազմեալ Ցանձնաժողովն երկուշաբթի օրը վերոյին դուռմարուելով Բաղքաքպետական պաշտօնատան մէջ, մասնաւորաբար դրաղեցաւ Նախարարութեանց և պետական պաշտօնատանց ղրկուելիք տասներորդներն։ այդ տումարք, կայսերական հրամանաւ պիտի բաշխուին կառավարական բոլոր պաշտօնեից։ Նմանապէս տասներորդք ղրկուեցան թագաւորական շրջանակաց նախագահներուն, որպէս զի մայրաքաղաքիս ժողովրդեան բաշխուին։ Դալալ բարձրասեռնեան անձանց և օտարազգեաց բաշխելի տումարաց, Օսմ. կայս. Պանքայի ընդհ. տնօրէն Պ. Ֆոնդէր յանձն առած է ստանալ զայնս ի Բերա և Հանրային Պարտուց վարչութեան տնօրէն Սելիմ Մելշամէ էֆէնտի ի Պոլիս։

Պ. ՂՈՒԼԷՐԻՆԷՆ

Տր. Վուլքովիչ, որ պուլկար կառավարութեան կողմէ յատուկ պաշտօն մ'ունի Բ. Դրան մօտ, մայրաքաղաքս հասաւ։

Պուլկար պատուիրակն երեկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց վարչի. նախարարին հետ որք այդ պատճառն միասին կը դտնուէին։

Բեռդրոսպուրգի օսմանեան դեսպան Շաքիր փաշա երեկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

—Վեհ. Սուլթանին հրամանաւ 13էն 18 տարեկան քառասուն և հինգ Փիլիպէցի խլամ պատանիք Պոլիս պիտի բերուին. ասոնց մէկ մասը մայրաքաղաքիս վարժարանաց և մէկ մասն ալ Պերութի մէջ ի նորոյ հաստատեալ Սուլթանիէ վարժարանը պիտի ընդունուին դաստիարակուելու համար։

—Ազգ. Պոլսոյ պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ գաւառին կուսակալն յատուկ երկրաչափներ ղրկած է Ուզուն-Քէօբրիւի Քարա-Պուլէք գիւղն ուր հանքածուխ երեւան եկած է։

—Երեկ իրենց պաշտօնատեղիներն ուղեւորուցան Բաղէշի նորընտիր կուսակալ Մէհմէտ փաշա և Վիէննայի օսմանեան դեսպանատան երրորդ քարտուղար Նուսրէթ Պէյ։

—Սոֆիայէ առնուած տեղեկութեանց նայելով մեծ Սոպրանիէն շաբթուս վերջն և կամ յառաջիկայ շաբթու պիտի գումարի։

—Կայս. կառավարութիւնն որոշած է որ մայրաքաղաքիս սպանդանոցք միակ անձի մը յանձնուին և Պոլսոյ մէջ միայն քսան երեք սպանդանոցք բացուին որոշուած տեղիք. նոյնպէս մրթուած անասուններէ առնուած տուրքն ևս մեղմուի։ Կայս. կառավարութիւնն այս առթիւ միջոցներ ձեռք առած է որպէս զի վաճառուած մսի գնոյն բարձրանալուն ալ տեղի չտայ։

—Կը լսենք թէ հայ մը ադերսագիր տալով Երմենական նախարարութեան, առաջարկեր է դրօշմաթղթի վաճառել երկաթուղւոյ արժեղիզոց Բրուսի տոմսերուն վրայ, որով բաւական հասոյթ մը պիտի գոյանայ եւմտական դանձուն։

—Զինուորական բարձրագոյն ժողովն նկատելով որ Զաթաճայի շրջակայ ամրութեանց այլ և այլ կողմերը նորոգութեան կարօտ վիճակի մէջ կը դտնուին, ծրագիր մը պատրաստեր է կայս. Իրատէով։ Հետեւաբար նորոգութիւնք պիտի սկսին ի մօտոյ։

—Ըստ Ճերնէ-Լոյսէի, Հանրօգուտ շինութեանց նախարար Զիւհտի էֆէնտի Պ. Բրէսէլի հետ իւր ունեցած մէկ տեսակցութեան միջոցին, յայտարարեր է եղեր թէ իւր ծրագիրն ընդունած է։ Այդ տեսակցութեան միջոցին խօսուեր է նաև դերմանացի երկրաչափին կողմէ երաշխաւորութեան համար ձգուելիք գումարին վրայ։

—Ֆէրիդ-էֆէնտի տարեցաւ կայս. անձնապահ զօրաբանակին առաջին զօրաբաժնի երկրորդ կիսապաժնի Միլլիկա և Իսկիւտարի հրամանատար Շեվքէթ փաշայի։ Կըսուի թէ Շեվքէթ փաշա եօթերորդ զօրաբանակի հրամանատար պիտի անուանուի։

—Եէմէնի նորընտիր կուսակալ ձէվիզ փաշա կայս. կառավարութենէն արտօնութիւն խնդրած լինելով իւր պաշտօնատեղն երթալու առթիւ կ'Պոլսէն անցնիլ, հրաման տուաղեր է ուղղակի Հիճազ երթալ ուր իւր ներկայութիւն անհրաժեշտ է։

—Երկու օրվ ի վեր մայրաքաղաքս հասած է Ճաղոնի Առնուտական նախարար դեսպանին Թանի Թամէլի, իւր մասնաւոր քարտուղարն Պ. Շեկրա Շէրբ և թարգմանութեամբ զօրաց տեղակալ Պ. Միւրադա Ագաբէյ։ Ճաղոնական պատգամաւորութիւնը Բ. Դրան անդլիական պանդոկը կը բնակի։

Պ. Միւրադա որդին է հանճարեալ հրատարակչին՝ Միւրադա Իշխանին որ անցեալները մայրաքաղաքս այցելած միջոցին այդ մասին տեղեկութիւն հաղորդած էր Վեհ. Սուլթանին։ Ն. Վեհապատութիւն այն ժամանակ փափագ յայտնած լինելով տեսնել այդ նորահնար հրացանը, Պ. Միւրադա անկից երեք հատ բերած է իւր հետ։

Ճաղոնական պատուիրակութիւնն երէկ Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Արտաքին գործոց Վսեմ. նախարարին հետ։

—Աւստրիական դեսպանատան երրորդ թարգման Լօղոթէթի կոմսն երեկ Վիէննա ուղեւորեցաւ արձակուրդով։

—Սարաստէոի Դուռն հրաման ղրկեր է Հալէպի կուսակալութեան՝ վերջին անդամ ի դէն կոչուած զօրքերը ցրուել։

—Սերբիոյ-պուլկար յանձնաժողովն, որ պաշտօն ունի սահմանագրուելն որոշել Պերկովայի կողմէն, աշխատութեան ձեռնարկեր է, սերբական անդամ Պ. Անկիէլիչ նախագահ անուանուելով։

—Աթէնքի ռումանական դեսպանատան առաջին քարտուղար Պ. Կիքա, որ նոյն պաշտօնով մայրաքաղաքս փոխադրուած է, երկու օր առաջ առատ հանելով իւր պաշտօնի դրութիւն անցաւ։

—Սոֆիէի կը ծանուցանեն թէ Մէհմէտ Թէհլիմանի ընկերակիցներէն բանի մ'աւարակիներ Կէյպրէի մօտերը Պէյթուլլահ անուն աւարակ մը սպաններ են այս օրերս։

—Երէկ գիշեր Պոլսոյ Ուն-Դարան թաղն հրդեհ ծագելով ծովեզերեայ ջաղացք մ'այրեցաւ։

—Ազգ. Պոլսոյ հելլենական դերհիւպատոս Պ. Ֆիլոն առաջին կարգի հիւպատոսութեան ատիճանի բարձրացուեր է իւր կառավարութեան կողմէ, և Սելանիկի հիւպատոսարանի երկրորդ քարտուղար Պ. Քամէնոս՝ Մանսդբրի դեր-հիւպատոս անուանուեր է։

—Մուսթաֆա անուն գործաւոր մը Պէյքօզի մէջ իւր բարեկամաց միայն տան վերնայարկի պատուհանն վար նետուելով, չարաչար մահուամբ մեռաւ։

—Տրապիզոնի Բիւլ դաւառակէն կը գրեն թէ տեղւոյն Հանրային պարտուց վարչութեան գործակալ Մէհմէտ էֆէնտի ոստիկանաց ձեռամբ որք ձերբակալուած չեն տակաւին։

—Տան-ութամեայ յոյն աղջիկ մը տեսնելով որ իւր սիրահարն, յոյն նաւավար մը, ուրիշ աղջկան մը նշանուեր է, յուսահատութենէն քանի մ'օր առաջ ինքզինքը ծով նետեց Բուսիլի-Հիսարէն, սակայն այդ պահուն ծովեզրէն անցնող հրեայ ձկնորս մը ազատեց հէգ աղջիկն որ արդէն մահուան դուռն հասած էր։

—Ազգի գիշերը, Բանկալթիի, Պ. Ժան Վիթալիսի առանը գոցեր մտնելով, Արուեստեան Երիտասարդաց միութեան երեսը տասներ գողցած են, թիւ 0,271,398 եւ 0,300,375։

—Քաղաքապետութիւնն ի պաշտօնէ կը ծանուցանէ թէ անասնոց մէջ ծագած համաճարակ ախտին պատճառաւ Քեազլըճանէի գիւղը չորս տարի ներքեւ առնուած է, ուստի այդ կողմը զրկուած բոլոր անասունք իրը վարակեալ նկատուելով Դավազի մաքրանոցը պիտի զրկուին։

—Երէկ, ածուխ փոխադրող ութ հոգեռնակիրք մեկայի մը նստած Պոլսէն Դարմիտա կ'անցնէին։ Մակոյկը կամուրջին մօտեցած պահուն Գաղը գիւղի շրջնակը կանցնելը ոտոց յարուցած տիրիներէն մակոյկն սկսաւ տատանիլ եւ բեռնակիրք վախնալուն ոտքի վրայ ելնելով, մակոյկը շրջեցաւ եւ բեռնակիրք ու նաւավար ծովն ինկան։ Հասած անմիջական օգնութեանց շնորհիւ նաւավարն եւ բեռնակիրաց վեցը թէեւ ազատեցան, սակայն միւս երկու բեռնակիրք խեղդուեցան։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՅՐԱՆՆԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

ՍԻՎԻԼԻՈՅ ՍԱՓԻՐԻՆ

Այս ոչխարհանուն թատերանուագին նիւթն առնուած է Պոմարշէի հռչակաւոր եռերգէն (trilogie)։ Հա՛ համառօտենք զայն ի ծանօթութիւն ընթերցողաց։ Տոքթ. Պարթոլոյ իւր Ռոզին շնորհարեկ առնուելոյն հետ կուսակալանալ երբ Ալմավիվա երիտասարդ կոմսն՝ օրիորդին գեղեցկութեան յանկուցեալ՝ շնորհիւ Ֆիգարոյ սարիրլին կը յաջողի Ռոզինի սիրոն հրապուրել և վերջապէս ազատել զայն տարեվի ծերունւոյն ճրանտներէն։ Տեսարանք ի Սեվիլիա։ Վարագոյրը քաշուելուն Ա. մավիվա կոմսը կերիտասարդ Ռոզինի տան պատուհանի տակ, գինը տեսնելու յուսով։ Նոյն միջոցին վրայ կը հասնի Ֆիգարօ սարիրլին որ կը խոստանայ պատանւոյն իւր միջոցներով զիւրացնել նոյա սիրալիր տեսակցութիւնները, վասն զի ինք ազատ մուտք ունի Պարթոլոյի տունն։ Առաջին անգամ Ալմավիվա կոմսը կը յաջողի հոն մտնել իբր ուսոյց մը, օրիորդները հմայելու գիշերը։ —Երիտասարդ անգամ կը յաջողի դարձեալ տես տալիս Ռոզինի հետ անոր երթալով իբր փոխանորդ դաշնակի դասատուին որ հիւանդ է, կ'ըսէ։ Դիտաղդութեան դասատուն վրայ կը հասնի Ֆիգարօ անոր խիզն ալ կը հանդարտեցնէ գումար մ'ուսկով։ Վերջին արարատեն Ֆիգարօյի չնորհիւ, Պարթոլոյի ամէն դժուարութիւններ ի դերեւ հանելով Ալմավիվա Ռոզինի երջանիկ առնուիլը կ'ըլլայ։

Այս թատերանուագը Ռոսինիի չորս հրաշակերտից մին է։ Առաջին անգամ երբ ներկայացուեցաւ ի Հռոմ, 1816ին, այս խաղը չարաչար սուլուեցաւ։ Երիտասարդ հեղինակն որ 13 օրուան մէջ զայն գրած էր, կը զգար թէ իւր գրածը հրաշակերտ մ'է, եւ թէ սուլուելուն պատճառն էր իւր կարծեցեալ յանդգնութիւնն որով հարձակեր էր այդպիսի նիւթի մը վրայ գրել զոր արդէն երգած էր Բայիչիելլօ։ Յաջողդ երեկոյին ներկայացումն իրեն յաղթանակ մ'եղաւ, եւ այն օրէն հետէ ուշադրեալ մեծ թատերարերանք անգամներ կրկնած են անոր նուագերն։ Եւ յիրաւի նա տիպար մ'է զուարճական դեղեցկութեան։

Ինչ պատասուշ փափկութիւն ունի Ա. արարատածին մէջ Ալմավիվայի նուագերգը (Cavatine) և mineur եղանակաւ։

Ահա ժպտի լեզուս երդով
